

Թիւ 2223  
Յունիս 23, 1961

Արժանաշնորհ  
Տ. Ներսէս Բէնյ. Բարուրեան  
Այցեչու չուփի եւ Նախագահ Միական Խորհուրդի  
Ս. Յովակիմ Աննա Եկեղեցւոյ  
Ուեսթ Փուլմըն.

Սիրելի Տէր Հայր.

Ատացած ենք 1961, Ապրիլ 1 Թուակիր Ձեր տեղեկագիրը, որով  
կը հաղորդէք թէ Յունուար 29ին գումարուած Միական Ժողովը կատարած է  
Միական Խորհուրդի մասնակի ընտրութիւն, եւ ներկայացնելով  
քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման  
պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր Միական Ժողովը տեղի ունեցած է  
Թեմական Կանոնադրութեան տրամադրութեանց համաձայն, եւ ընտրուած  
անձերը, իբրեւ Եկեղեցւոյ Նախնէախնդիր ու Նուիրեալ անդամներ,  
կը վայելեն Ձեր համայնքի ժողովուրդին վստահութիւնը, այսու կը  
վաւերացնենք անոնց ընտրութիւնը, ըստ հետեւեալին.-

- Տիարք՝ Մուր Երնաղզեան
- Խաչիկ Պողոսեան
- Յակոբ Պօրոյեան
- Ճօրն Միքայէլեան
- Պապ Աստուրեան

Օրհնելով նորընտիր անդամները՝ կը մաղթենք Ձեզի եւ պատուարժան  
Միական Խորհուրդիդ յաջող եւ արդիւնաւոր գործունէութիւն,  
ի փոստ Աստուծոյ եւ ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ ու ի շինութիւն  
համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Մնամք Տիրուանդ սիրոյ ողջունիւ  
Ազօթարար

ՍԻՌՆ ԱՐՄԵՂԻՍԿՈՂՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Կը յանձնարարենք որ Միական Ժողովները գումարուին ձեր Նախագահութեամբ  
եւ ընտրութեանց արդիւնքը ու արձեկան տեղեկագիրը  
Առաջնորդարան զրկէք տարւոյս Մարտ ամիսէն առաջ եւ ոչ թէ Յունիսին  
մէջ: